ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 25-ից 28-ը, ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի պետ Սենիկ Ներսիսյանի և ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 24-ից 28-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Նիժնի Նովգորոդ) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Աշոտ Մուրադյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ,

Սենիկ Ներսիսյան – ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի պետ,

Օհաննա Գառգալոյան - ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյան, 2024թ. սեպտեմբերի 25-ից 28-ը, ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի պետ Սենիկ Ներսիսյան, ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյան Ռուսաստանի Դաշնություն, ք. Նիժնի Նովգորոդ, 2024թ. սեպտեմբերի 24-ից 28-ը:

3. Հրավիրող կողմը՝

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի և ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի քարտուղարություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 79-րդ, ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 47-րդ նիստերն անցկացվել են երկօրյա ձևաչափով: Ս.թ. սեպտեմբերին 25-26-ին տեղի են ունեցել փորձագետների նիստերը, որոնց ընթացքում վերջնական քննարկվել, ամփոփվել և ստորագրման են նախապատրաստվել նիստի օրակարգում ներառված որոշումների նախագծերը, իսկ սեպտեմբերի 27-ին անցկացվել են ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 79-րդ (այսուհետ՝ Ղեկավարների խորհուրդ) և ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի (այսուհետ՝ Միավորված կոլեգիա) 47-րդ նիստերը, որի ընթացքում մաքսային ծառայությունների ղեկավարների կողմից քննարկվել և ստորագրվել են նիստերի օրակարգերում ներառված որոշումները:

5. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել է մաքսային կարգավորման ոլորտին առնչվող տարբեր հարցեր, այդ թվում նաև՝ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշակի ապրանքների դասակարգման առանձնահատկություններին, ապրանքների դասակարգման և ծագման հարցերով աշխատանքային խմբին, կանխիկ դրամական միջոցների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնելու, ապրանքների հայտարարագրի լրացման կարգում փոփոխությունների կատարմանը և մաքսային տարանցում մաքսային ընթացակարգի ավարտման կարգի կատարելագործմանն առնչվող մի շարք հարցեր: Համաձայնեցվել է մինչև 2030 թվականը ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության երկրորդ փուլի իրականացման միջոցառումների ծրագրի նախագիծը:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նիստի ընթացքում քննարկվել են նաև նաև ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 80-րդ և ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 48-րդ նիստերի անցկացման առնչությամբ հարցերը:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԱՊՀ մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 79-րդ նիստի շրջանակում ստորագրվել է «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային մարմինների կողմից տրանսպորտային (փոխադրման) և առևտրային փաստաթղթերի վրա մաքսային մարմինների կնիքների և դրոշմակնիքների տեղադրման կարգի մասին» համաձայնագիրը: Նիստի ընթացքում ընտրվել է նաև ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահ:

Ընդհանուր առմամբ ստորագրվել է Միավորված կոլեգիայի 23 և Ղեկավարների խորհրդի 11 որոշում:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ԱՊՀ անդամ պետությունների միջև ավելի սերտ համագործակցության և մաքսային ոլորտում աշխատանքների ակտիվացման. ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի հաջորդ նիստի՝ 2025 թվականի առաջին կիսամյակում Ղրղզստանի Հանրապետությունում. իսկ ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հաջորդ նիստը՝ 2024 թ. չորրորդ եռամսյակում՝ Ղազախստանի Հանրապետությունում անցկացնելու մասին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ա. Մուրադյան

Ս. Ներսիսյան

Օ. Գառգալոյան

30.09.2024